ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ
№2024-10-4-Ա

ք. Երևան 09.10.2024թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2024 թվականի հոկտեմբերի 9-ի նիստում քննարկեց 2024 թվականի հուլիսի 30-ին հայտատուի ներկայացուցիչ Էմմա Պետրոսյանի կողմից ներկայացված JOINT STOCK COMPANY "FATS AND OIL INTEGRATED WORKS" ընկերության (UL. TITOVA 27, EKATERINBURG RU-620085 SVERDLOVSKAYA OBLAST, RU) «НУТРИЛАКТПРО» (IR1704703) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «NUTRILAK», «НУТРИЛАК» (Սիմվալին Հոլդինգ Լիմիթիդ, 32 Kritis, Papachristoforou Building, 4th floor, 3087, Limassol, Cyprus, (CY), N 11676, 11677) շփոթելու աստիճան նման բառային ապրանքային նշանների առկայության պատճառով: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշման «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ և 122-րդ կետերով սահմանված հիմքերով բառային ապրանքային նշաններին նման են համարվում բառային ապրանքային նշանները, որոնք ունեն ձայնային նմանություն, որոնց նմանությունը որոշվել է ձայնային հատկանիշներով: Համեմատվող ապրանքային նշանները զուգորդվում են միմյանց հետ իրենց հնչողությամբ, այն՝ է հակադրված ապրանքային նշաններն առանձին վերցրած ամբողջությամբ ներառված են հայտարկված ապրանքային նշանի մեջ: Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և Կարգի 111–րդ կետի 14–րդ մասի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս

օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նշանը չի կարող գրանցվել որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործվող և https://nutrilacusa.com/html/#about-us կայքում գովազդվող «NUTRILAK» ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի նախագահը նշեց, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «NUTRILAK», «НУТРИЛАК» (Սիմվալին Հոլդինգ Լիմիթիդ, 32 Kritis, Papachristoforou Building, 4th floor, 3087, Limassol, Cyprus, (CY), N 11676, 11677) շփոթելու աստիճան նման բառային ապրանքային նշանների առկայության պատճառով: Նաև Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նշանը չի կարող գրանցվել որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործվող և https://nutrilacusa.com/html/#about-us կայքում գովազդվող «NUTRILAK» ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Բողոքարկողի ներկայացուցիչը պնդում էր, որ բողոքը պետք է բավարարվի:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման

խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Ներկայացուցիչ Էմմա Պետրոսյանի կողմից ներկայացված JOINT STOCK COMPANY "FATS AND OIL INTEGRATED WORKS" ընկերության «НУТРИЛАКТПРО» (IR1704703) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել, փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ